ԳՈՐԳԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ ԱՐՈՒԵՍՏԸ ԶԱՐՄԱՀԱԼՈՒՄ

Ա.

ԶԱՐՄԱՀԱԼԻ ԳՈՐԳԵՐԻ ԷԱԿԱՆ ՅԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ

Իրանի Սպահան նահանգի Զարմահալ գաւառի հայ գիւղացիների տնայնագործութեան եւ նրանց տնտեսական կեանքի զարգացման խնդրում, 365 երկար տարիների ընթացքում, նշանակալից դեր է կատարել գորգագործութեան արուեստը:

Ուշագրաւ է եւ այն, որ Սպահանի գաւառներից Զարմահալը գորգագործութեան առանցքն է կազմում, ուր արտադրուած գորգերն իրենց գունագեղ, նրբաճաշակ զարդանկարներով, իրենց գոյների բազմազանութեամբ, առանձնայատուկ ոճերով, ժամանակի ընթացքում, հետաքրքրական նուաճումներ են արել եւ հասել որոշ զարգացման:

Դեռ 1863 թուականին, Նոր-Ջուղայեցի Տ. Յովհաննէս Աւագ քհնյ. Խաչիկեանը, Կալկաթայում հրատարակած «Արկածք» գրքում, Զարմահալի տնայնագործութեան եւ գորգագործութեան մասին արձանագրել է այսպէս. «... Եւ կանայք ի տան ապահովեն զկութս խաչանց ի կոզի, ի պանիր, ի չորթան եւ այլն: Զգեղմն խաչանց խուզեալ ի զանազան որակս ներկեալ եւ մանեալ ոստայնանկեն զճարտարակազմ յօրինուածս պատուական գորգոց եւ կապերտաց, նաեւ գործեն զանկապանս եւ ձեռնոցս թագաւորավայել» (էջ 140):

1919 եւ 1946 թուականներին, Զարմահալ գաւառի հայաբնակ գիւղերի գեղջուկների տնտեսական կեանքի հիմնական էջերն ու ազգագրութիւնն ուսումնասիրելու նպատակով՝ շրջեցինք հայաբնակ գիւղերը, շարաթներով ապրեցինք հիւրասէր գիւղացիների խրճիթներում, վայելեցինք նրանց ջերմ, անկեղծ հիւրասիրութեան բարիքները: Բոլոր գիւղերումն էլ մեզ պատուեցին քաղցրահամ մածունով, անոյշ կաթով, հիւսքանչ հում սերով ու կարագով, աննման քաթայով եւ եախնիով: Այդ ժամանակ էլ ծանօթացանք նրանց հիւրասենեակները զարդարող բազմատեսակ գորգերի հետ, որոնց ճոխ գոյներով գունագեղ նկարները, սիրուն պատկերները, հմուտ հիւսուածքն ու տարբեր ոճերը վկայում են մի էական հանգամանք, որ Զարմահալի հայաբնակ գիւղերում փայլել են վարպետ գորգագործուհիներ, որոնք իրենց արուեստով գորգագործութեան մշակոյթին նուիրել են մի շարք գեղեցկութիւններ: Դրանք սեւաչեայ, համեստ, ամօթխած, աշխատասէր ու ժրաջան այն գեղջկուհիներն են, որոնք գորգարուեստին աւանդ են թողել տարբեր մեծութեամբ գեղակերտ ու նրբին գորգեր, որոնց մէջ ապրում են գորգագործական ձիրքով օժտուած հայ գեղջկուհիների արուեստի էական յատկանիշները:

Կան գորգեր, որոնց գեղեցիկ զարդանկարները, երանգների ներդաշնակ քաղցրութիւնը եւ հրաշալի հիւսքերը չափազանց խօսուն են եւ գրաւիչ:

Այդ գորգերից շատերը, որոնք մեծ հետաքրքրութիւն են ներկայացնում, անգիր գողարիկ գրքեր են, որոնց մէջ կարդում էք Զարմահալցի հայ գեղջկուհու սիրան ու հոգին. թանկագին գորգեր, որոնց գեղանկար հիւսքի մէջ վաստակաւոր գեղջկուհիները գրել են իրենց անպին պապերի արուեստի հոգին:

Այդ գեղակերտ ստեղծագործութիւններով գեղջկուհիները հարստացրել են Զարմահալի գորգագործութեան գանձարանը:

Այդ արտադրութիւնների մէջ առանձնայատուկ տեղ են գրաւում այն գորգերը, որոնք իրենց հիւսուածքով ու չարագրութեամբ զուտ պարսկական արուեստի գեղեցկութիւններ են եւ պատկերում են Խորասանի, Համադանի, Սպահանի, Սուլթանապատի, Քրմանշահի հին գորգերի էական յատկանիշները:

Սակայն, Զարմահալի հայաբնակ գիւղերի գորգարուեստն ուսումնասիրելիս՝ տեսնում էք նաեւ այնպիսի գորգեր, որոնք հիւսուածքի, զծագրութեան, գոյների, նաշխերի տեսակէտից տարբեր առանձնայատկութիւններ ունեն: Կան գորգեր, որոնք հայկական են եւ ընդհանրապէս երկրաչափական զծերով են արտայայտուած: Դրանք պատկերում են մեր նախահայրերից աւանդ մնացած հին գորգերի գեղեցիկ զծարուեստն ու ոճը՝ նոր ձեւերով արտայայտուած:

Պէտք չէ մոռանալ, որ Զարմահալի գեղջուկներն Արարատեան դաշտի հայ բնակիչներից են, որոնք Շահ-Աբբաս Ա.ի բռնի գաղթի շրջանում՝ գորգագործութեան մշակոյթը Հայաստանից իրենց հետ Իրան են բերել, որը ժառանգաբար անցել է սերնդից սերունդ: Դրանով էլ պիտի բացատրել, որ Զարմահալի գեղջկուհիների մոտիֆների որոշ մասը կրում է հայկական գորգերի աւանդական յատկանիշները:

Զարմահալի հայաբնակ գիւղերի գորգերի ընդհանուր պատկերը դիտելիս՝ ձեր ուշադրութիւնը գրաւում են նաեւ մի շարք գորգեր, որոնք բոլորովին ինքնուրոյն, նոր արտադրութիւններ են եւ իրենց էական կառուցուածքով ու զծագրութեամբ ցոյց են տալիս հայ գեղջկուհիների գեղարուեստական հասկացողութիւնը: Դրանք կարեւոր ազգագրական նիւթեր են: Այդ գորգերի բնորոշ առանձնայատկութիւնը նոր զծարուեստի, զծաձեւերի ինքնուրոյնութիւնն է. մի հանգամանք, որը բարձրացնում է Զարմահալի գեղջկուհիների գործած գորգերի գեղարուեստական-պատմական արժէքը: Առհասարակ, Զարմահալում տեսնում էք զանազան, տարբեր եւ հետաքրքրական գորգեր: Այդ հիմնական տարբերութիւններն էլ կազմում են հայ գեղջկուհիների արտադրութեան յատկանշական ոճն ու արուեստը, որոնք իրենց ինքնուրոյն գրոչմով զանազանւում են Սպահանի գորգագործութեան գլխաւոր կենտրոններ հանդիսացող միւս գաւառների՝ Փեբիայի, Քեազազի, Քեամարայի, Գեափլայի հայաբնակ գիւղերի գորգարուեստից: Զարմահալի գեղջկուհիների ստեղծագործութիւնները կարելի է անուանել Զարմահալի գորգեր, որոնց բնորոշ արուեստն ինքնատիպ եւ ներդաշնակ ոճն է:

Նշենք, սակայն, որ Զարմահալի գորգահիւսութեան արուեստում զծագրական տեսակէտից կան գորգեր, որոնք որքան ինքնուրոյն են, զարձեալ պատկերում են իրանական եւ մասամբ էլ հայկական ոճերի էական զծերը:

Գծաձեւերի էութիւնը պարզելիս՝ նշենք մի այլ կարեւոր երեւոյթ: Զարմահալում հայ գեղջկուհիները նոր գորգեր պատրաստելիս՝ երբեմն ընդօրինակել եւ մշակել են հին գորգերի գծաձեւերը, կամ նոր օրինակները մասամբ փոխ են առել իրանական հին գորգերից, կամ զանազան շրջանների գծագրութիւններն իրար հետ ներդաշնակելով՝ նոր ձեւ եւ ոճ են տուել: Այս երեւոյթը, ի հարկէ, չի կարող նպաստել Զարմահալի գորգարուեստի զարգացմանը: Այդ գծով հնարաւոր չէր ստեղծել ինքնուրոյն ոճ եւ գծագրութիւն:

Նկատենք եւ ա՛յն, որ Զարմահալի հայաբնակ գիւղերում գորգարուեստի տարբեր արտադրութիւններն ուսումնասիրելիս՝ տեսանք գործուածքներ, որոնք իրենց գլխաւոր գծերով նոյն արուեստը եւ նոյն ձեւերն են պատկերում, կամ հին արդիւնաբերութեան ազդեցութիւնն են կը-

© National Library of Armenia

ում։ Այդ գորգերն աւելի առեւտրական արտադրութիւններ են։ Գորգեր էլ կան, որոնք իրենց պատկերաւորութեամբ, գոյների բազմազանութեամբ եւ զարդանկարների ներդաշնակութեամբ թէեւ գեղեցիկ են, բայց գեղարուեստական հիւսուածքով մեծ արժէք չեն ներկայացնում. իսկ շատերն էլ միջակ արտադրութիւններ են։

Մի երեւոյթ, սակայն, անժխտելի է։ Զարմահալում հայ գեղջկուհիների պատրաստած գորգերը, մեծ մասամբ, ճաշակաւոր ստեղծագործութիւններ են եւ համապատասխանում են ժամանակի պահանջների արտադրութեանը։ Այդ գորգերը բանուածքով կակուղ են, գոյները՝ կենդանի, իսկ գծաձեւերը ներդաշնակ են ու գեղարուեստական։

Ընդգծենք մի այլ յատկանշական տարբ· դա նրանց դիմացկունութիւնն է եւ ուժեղութիւնը։ Այդ հանգամանքը պիտի բացատրել նրանով, որ գորգերի երկարութեան թելերը մեծ մասամբ բրդից են։ Նոյնպէս շատ գորգերի ներքնաթելերը բուրդ են, իսկ բանուածքը Զարմահալ գաւառին առանձնայատուկ է։ Առհասարակ, Զարմահալի գորգերը, մեծ մասամբ, հիւսուած են բուրդ յատակի վերայ՝ բուրդ կապերով։ Դա յատկանշական մի երեւոյթ է ա՛յն տեսակէտից, որ հնագոյն ծանօթ հայ գորգերը եւս միայն բուրդ են։ Բայց կան գորգեր էլ, որոնց պատրաստութեան համար ե՛ւ բամբակ ե՛ւ բուրդ են գործածուած։

Ո՛րքան խորանում էք Զարմահալի հայ գեղջկուհիների գործած գորգերի բովանդակութեան մէջ, նոյնքան էլ պարզւում են ձեզ մի շարք էական յատկանիշներ, որոնցից գլխաւորը գորգերի գունագեղ գոյների հարազատութիւնն է։ Դա պիտի բացատրել նրանով, որ այդ գորգերը քիմիական լուացքի չեն ենթարկուած։

Ուշագրաւ է եւ ա՛յն, որ Զարմահալի այդ վաստակաւոր գեղջկուհիները գորգագործութեան յատուկ դասընթացքներ չեն անցել, այլ իրենց մայրերի ու տատիկների մօտ են սովորել եւ տարիների ընթացքում մշակուել են, զարգացել եւ ձեւակերպուել։

Զարմահալի գորգագործութեան էական յատկանիշները լուսաբանելիս՝ արձանագրենք մի այլ կարեւոր երեւոյթ, որ յիշատակարաններով կամ տարեթուերով գորգեր շատ քիչ կան։ Հայ գեղջկուհիները տարեթուեր դրել են յիշատակի համար, որոնք, սակայն, շատ հազուադիւտ են։ Այդ է պատճառը, որ Զարմահալի գորգաբուեստի զարգացման եւ ժողովրդականացման պատմութիւնը գրելու համար փաստական տեղեկութիւններ պակասում են։

Բ.

ԶԱՐՄԱՀԱԼԻ ՀԱՅ ԳՈՐԳԱԳՈՐԾՈՒՀԻՆԵՐԸ

Զարմահալի 14 հայաբնակ գիւղերում կան 45 գորգագործ գեղջկուհիներ, որոնք օժտուած են լաւագոյն եւ ընտիր գորգեր գործելու առանձին ձիրքով։ Տուէք նրանց բրդէ գոյնզգոյն թելեր, գեղարուեստական նուրբ զարդանկարներ, ծաղկանկարներ, եւ վստահ եղէք՝ որ այդ գեղեցկութիւնները նրանք գորգերի վերայ հարազատութեամբ պատկերելու են։

Ընդգծենք, սակայն, որ Զարմահալի հայ գեղջկուհիների գորգագործական աշխատանքը ծանր է։ Նրանք ո՛չ բրդի զտարան ու մանարան ունեն, ո՛չ յատուկ ներկատուն եւ ո՛չ էլ գորգերի քիմիական լուացարան։ Ամբողջ գաւառում որեւէ մեքենայ չէք դտնում. որով ամէն ինչ կատարւում է նահապետական ձեւով։ Դրանով էլ պիտի բացատրել, որ գորգագործ գեղջկուհիներն իրենք են հաւաքում ոչխարի բուրդը, լուանում, դզում ու թելերը մանում եւ իրենք էլ ներկում են։ Այսպէս սեղմ գծերով պատկերենք նրանց կերպարները։

1· Գորգագործուհի Ովսաննա Դաւթեան։ Զարմահալի գորգագործական մշակոյթի պայծառ ու փայլուն գեղջկուհի-

Զարմահալի Մամուռան գիւղում՝ Տիկ· Ովսաննա Դաւթեանի 1940 թուականին գործած գորգերից մէկը, որի արժէքն է երկու հազար թուման։ Զարմահալում կոչում են «թօրանց» (Արամ Երեմեանի գրական դիւանից)։

ներից մէկն է Ովսաննա Դաւթեանը, որ իր պատրաստած նկարազարդ գորգերի արուեստով՝ Զարմահալում մեծ հռչակ ու համբաւ է ունեցել։ Նա փոքր հասակից ջերմօրէն սիրել է գորգարուեստը, որ սովորել է իր ծնողներից։ Բնիկ աղբուլաղցի այս գորգագործուհին 25 տարիներ իր կեանքը, իր արուեստի հմտութիւնը նուիրել է գեղարուեստական գորգերի պատրաստութեան ծանր, բայց ազնիւ աշխատանքին։ Նրա արտադրական պատմութեան մէջ՝ առանձնայատուկ տեղ են գրաւում 15 նկարազարդ գորգերը, որոնք հարստացրել են Զարմահալի գորգագործական արուեստի գանձարանը։

Նա գերազանց որակի մի նոր զարդարուն գորգ էր գործում, երբ Մամուռան գիւղում կանգ առինք նրա դազգահի մօտ։ Գունեղ բրդէ թելերը նա հմուտ ձեռքերով արագութեամբ շարում էր հենքի բարակ թելերի վրայ։

— Ո՞ւմ մօտ էք սովորել գորգագործութիւնը, — հարցնում եմ վաստակաւոր գեղջկուհուն։

— Սովորել եմ մեծ մամիս ու մայրիկիս մօտ, — համեստութեամբ պատասխանում է· ապա ինձ առաջնորդում հիւրասենեակը, ուր ուշադրութիւնս գրաւում են պատի վրայ հպարտ բազմած երկու գեղեցիկ գորգեր, որոնցից մէկը նա գործել է 1937 թուականին, Մամուռան գիւղում, Մաթուս աղա Աւետիքեանի պատուէրով, իսկ միւսը պատրաստել է 1940 թուին։ Դրանցից առաջինը զարդարուն, նուրբ եւ գիմացկուն մի գորգ է, որը դրաւիչ է իր վառ գոյներով, ցոլացող գեղեցիկ նախշերով։ Իշխող կարմիրը, բաց կապոյտ (արի), կանաչ, վարդագոյն, բաց կարմիրը (սուրաթի), մուգ կանաչ եւ մանիշակագոյն երանգներն, իրենց գեղարուեստական ներդաշնակութեամբ, մի առանձին գրաւչութիւն են

տալիս գորգի բովանդակութեանը, որ ունի 2 մետր 82 հարիւրորդամետր երկարութիւն եւ մի մետր 74 հրդմ· լայնութիւն: Արժէքն է 2000 թուման:

— Ի՞նչպէս էք մաքրում այս գորգերը, երբ անհրաժեշտ է լուանալ, — հարցնում եմ գորգի վարպետ դեղջկուհուն:

— Անցեալում գորգերը լուանում էինք թեթեւ կրաջրով, — հայկական ամօթխածութեամբ նա սկսեց բացատրել, — յետոյ տեղական հարթուկով արդուկում էինք, որպէսզի գորգերի բուրդի խաւերը փայլեն· բայց նկատեցինք, որ այդ լուացումը վնասում է գորգին, ուստի այլեւս լուանում ենք սարից քաղած չօղան խոտաբոյսի հիւթով: — Հայաստանից եկած մի վարպետ գորգագործ մեզ սովորեցրեց նաեւ քիմիական լուացումը, — խորացրեց դեղջկուհին իր բացատրութիւնը, — բայց դա թէեւ փայլ է տալիս գորգերին, սակայն յետոյ վնասում է եւ բոլորովին գունաթափ անում: Լուացուած գորգը չի պահում իր հարազատութիւնը, — շարունակեց նա հիմք ունենալով իր փորձառութիւնը, — բուրդը կորցնում է իր բնական իւղը եւ չորանալով վնասում է: Զպէտք է գորգի գոյները լուանալ, որովհետեւ ամէն մի գորգ համբաւ ունի ոչ թէ նրա համար՝ որ լուացուած է, այլ հարազատ է:

Ովսաննա Դաւթեանը միաժամանակ գորգարուեստի մի վաստակաւոր ուսուցչուհի է: Նրա մօտ սովորել են 8–15 տարեկան բազմաթիւ դեղջկուհիներ, որոնց սրտերում թաքնուած գորգագործական արուեստի սէրը նա ոչ միայն զարգացրել է, այլեւ նրանց մէջ զարթեցրել է դեղարուեստական ճաշակ եւ հաղորդել է նրանց իր վարպետութիւնը:

2· Գորգագործուհի Արփիկ Մելքոնեան: Մօտ 22 տարեկան, հայկական դեղեցիկ դիմանկարով ա՛յնքան գրաւիչ այս դեղջկուհին համարւում է Զարմահալի գորգագործական արուեստի լաւագոյն վարպետուհին, որի կատարած գործը մեծ է գաւառի գորգարդիւնարերութեան զարգացման գործում:

Իր հմուտ ձեռքերով նա վարպետօրէն գործել է գունագեղ, դեղեցիկ գորգեր, որոնք իրենց ինքնատիպ գոյներով ու զարդերով Զարմահալի գորգագործական արուեստի պատմութեան մէջ առանձնայատուկ տեղ են գրաւում:

Իր նրբին արուեստով նա այսօր պարծանքն է Զարմահալ գաւառի Լիւսիան գիւղին, ուր ծնուել է 1924 թուականին: Փոքր հասակից գորգահիւսութեան արուեստը սովորել է իր ծնողների մօտ եւ չնորհիւ իր բնածին ճիրքի, ուշիմութեան եւ յարատեւ աշխատասիրութեան՝ կարճ ժամանակում տիրապետել է գորգագործութեան բարդ արուեստին:

Նրա գործած որոշ գորգերն ուշագրաւ են նրանով, որ նա օգտագործել է արեւելեան դեղագարդային արուեստի աւանդները: Նոյնպէս հանդամանօրէն ուսումնասիրել է հայկական գորգերի հնագոյն նմոյշները: Իր հետաքրքիր նուաճումներով էլ նա այսօր պատիւ է բերում Զարմահալի ժողովրդին եւ նրա գորգահիւսութեան մշակոյթին:

3· Բալասան, Սոֆիա եւ Խաթուն Վերդիեաններ: Գորգագործութեան մշակոյթը իր պատուաւոր տեղն ունի նաեւ Զարմահալի հայաբնակ Մամուռան գիւղում, ուր հինգ տան դեղջկուհիները նրբիրուել են գորգարուեստին: Նրանք սովորել ու ձեւակերպուել են իրենց ծնողների ղեկավարութեամբ: Այդ հին, փորձուած գորգագործուհիների շարքում առաջնակարգ տեղ են գրաւում երեք վարպետ դեղջկուհիներ, որոնք իրենց ձեռքերում բարձր են պահել Զարմահալի գորգագործական մշակոյթի հմայքն ու վեհութիւնը: Դրանք Բալասան, Սոֆիա եւ Խաթուն Վերդիեաններն են, որոնք գունեղ բրդէ թելերով գործել են բարձր որակի գորգերի նոր տեսակներ, նոր նախշեր եւ դեղարուեստական բրդէ կապերաններ, որոնք Զարմահալի գորգագործական արուեստի գանձարանում ուրոյն տեղ են գրաւում:

Նրանց հմուտ գործած մէկը միւսից դեղեցիկ բրդէ գարդանկար գորգերն ունեն ամէն տեսակ չափեր· ոմանք ունեն վեց մետր երկարութիւն եւ չորս մետր լայնութիւն, իսկ հասարակ գորգերի լայնութիւնն է 3 մետր, երկարութիւնը՝ 4:

Առանձին հաճոյքով նայում եմ նրանց գործած գորգերի գրաւիչ գարդանկարներին ու նախշերին եւ ապրում գորգարուեստի դեղեցկութեամբ: Նրանք գարդարուն գորգերի պատրաստութեան գործով մեծ աշխատանք են կատարել, Զարմահալ գաւառի գորգագործական արուեստի արդիւնարերութեան համար:

— Ո՞րտեղից են այս դեղեցիկ գորգերի դեղարուեստական նկարները, — հարցնում եմ վարպետ գորգագործուհի Բալասան Վերդիեանին:

— Մեր գործած որոշ գորգերի գարդերն ու նկարներն օրինակից դուրս ենք քաշել (օրինակել, օգտուել ենք) գլխաւորապէս Բրմանչահի, Համադանի եւ այլ վայրերի նկարազարդ, գարդարուն գորգերից: Օգտուել ենք նաեւ հայկական հին գորգերի նմոյշների գարդանկարներից: Նոյնպէս օգտագործել ենք տպագիր գարդարուն նկարները:

Սակայն, նշենք, որ Զարմահալի դեղջկուհիների գործած որոշ գորգերի նկարների դեղարուեստական ձեւակերպումները միանգամայն ինքնուրոյն են:

Գորգերի տեխնիկայի մասին որոշ բացատրութիւններ ու լուսաբանութիւններ տալիս է նաեւ վարպետ գորգագործուհի Սոֆիա Վերդիեանը:

— Մեր գործած գորգերին, — բացատրում է նա, — ասում ենք դալի, իսկ գորգի նախշի ձեւին՝ քօրանչ: Թելը, որին կոչում ենք հիւսուածք կամ առէջ, բրդից է կամ բամբակից, իսկ գործուածքը՝ բրդից: Միջին թելը թէ՛ բամբակից է եւ թէ՛ բրդից: Տոկունութեան, ուժեղութեան համար նախընտրում ենք բամբակէ առէջը, որն աւելի դիմացկուն է: Այլ գորգից ընդօրինակելուն ասում ենք «դուրս քաշել»:

4· Ծաղիկ Բայանդուրեան: Զարմահալի գորգագործական արուեստի պատմութեան մէջ ուրոյն տեղ են գրաւում նաեւ հայաբնակ Լիւսիան գիւղին պատիւ բերող ութը վարպետ գորգագործ ընտանիքների դեղջկուհիները, որոնց արագաշարժ ու ճարպիկ մատների տակ, ամուր հենքի վրայ, ստեղծուել են բրդէ նկարազարդ գորգեր՝ երփներանգ նախշերով: Այդ ընտիր գորգերով նրանք զարկ են տուել գաւառի գորգարտադրութեան մըշակոյթին:

Լիւսեանի լաւագոյն գորգագործ դեղջկուհիների շարքում առանձին յիշատակութեան արժանի է Ծաղիկ Բայանդուրեանը, որ իր դաշզգահի մօտ արագ եւ համաչափ աշխատում էր եւ գորգի նըմուշի ստեղծման գործում մեծ հմտութիւն ու ջանք էր գործադրում: Թերեւս այդ երեւոյթով պիտի բացատրել, որ նրա ձեռքով պատրաստուած բազմաթիւ գորգերը բարձր գնահատական են ստացել:

Նրա գորգագործական արուեստի ամենաբեղնաւոր տարիները կապուած են Լիւսեան գիւղի հետ: Ամբողջ 25 տարիներ նա այնտեղ գործել է նկարազարդ և ծաղկանկար գորգեր, որոնք վկայում են նրա արուեստի հմտութեան, վարպետութեան եւ ոճի էութեան ու նուաճումների մասին:

Գորգագործութեան այս վաստակաւոր դեղջկուհին իր աւանդ թողած նկարազարդ գորգերով այսօր ապրում է Լիւսեանի գիւղացիների սրտերում, որոնք հպարտ են նրա գորգարուեստով եւ սիրով ու յարգանքով յիշում են նրա անունը· իսկ նրա պատրաստած գորգերը մտել են արդէն Զարմահալի գորգագործական արուեստի պատմութեան գանձարանը:

(Շար· 1)

ԱՐԱՄ ԵՐԵՄԵԱՆ

© National Library of Armenia